ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հհ	Առաջակի անվանումը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի կարգավիճակը	Մերժման դեպքում հիմնավորումը
1	Բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցում	Կառուցել կահավորված, բարեկարգ խաղահրապարակ, որը հնարավոր կդարձնի տարվա ցանկացած եղանակին կազմակերպել և անցկացնել սպորտային և ժամանցային միջոցառումներ նպաստելով առողջ ապրելակերպի զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանմանն ու շուրջ 2850 բնակչի սոցիալական նոր կապերի սեղծմանն ու ամրապնդմանը:	Ընդունվել է	
2	Ֆուտբոլի դաշտի կառուցում	Ծրագիրը նախատեսում է Փոքրաշենում կառուցել ժամանակակից ֆուտբոլային դաշտ՝ համայնքի երեխաների, երիտասարդների և մարզասեր բնակիչների համար: Նախագիծը ներառում է խոտածածկի տեղադրում, դարպասների ու նստարանների տեղադրում, լուսավորության ապահովում և այլ անհրաժեշտ աշխատանքներ:	Ընդունվել է	
3	Խաղահարապարակի բարեկարգում	Վահրամաբերդ բնակավայրում նախատեսվում է բարեկարգել և մարզասարքերով կահավորել ԼԵՆ-ԳԷՍ թաղամասի խաղահրապարակը, ինչը գյուղական բնակավայրում ապրող երեխաների ֆիզիկական, մտավոր, սոցիալական զարգացման համար հետաքրքիր և անվտանգ վայր կդառնա:	Ընդունվել է	

4	Զբոսայգու կառուցում	Ծրագրով առաջարկվում է Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների փողոցի հարակից տարածքում՝ մոտավոր 10000 քառակուսի մետր տարածքով, հիմնել զբոսայգի, որը կկառուցվի փուլ առ փուլ: Առաջին փուլում նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, հարթեցում, ցանկապատում,լուսավորության և ոռոգման ցանցի կառուցում: Իսկ հետագայում կկառուցվեն ճեմուղիներ, շատրվաններ, կկանաչապատվի և կկահավորվի	Ընդունվել է	
5	Մինի ֆուտբոլի դաշտի կառուցում	Հովիտ բնակավայրում մինի - ֆուտբոլի դաշտ կառուցումը հնարավորություն կտա բոլոր ցանկացողներին զբաղվել ֆուտբոլով, կազմակերպել մրցումներ և ժամանցային միջոցառումներ, ինչը կնպաստի համախմբվածության ամրապնդմանը և առողջ ապրելակերպի ձևավորմանը:	Ընդունվել է	
6	Անհոգ մանկություն	Առաջարկվում է կառուցել ժամանակակից, անվտանգ և բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ, որը կծառայի Մայիսյան բնակավայրի 3-15տարեկան երեխաների (140-160) համար: Այս տարիքային բազմազանությունը ևս հնարավորություն կտա երեխաներին զարգացնել շփումը:	Ընդունվել է	
7	Ժամանցի կենտրոն	Ծրագրի շնորհիվ բնակիչները իրենց ժամանցը կազմակերպելու համար ստիպված չեն լինի գնալ այլ բնակավայրեր, ինչն էլ իր հերթին կնպաստի մարդկանց ժամանակի և ֆինանսի խնայողությանը:	Ընդունվել է	
		Ծրագրի նպատակն է՝ Արևիկ բնակավայրում դահլիճի վերանորոգման ու		

8	Բարեկարգ բնակավայր՝ հանուն բարեկեցիկ ապագայի	կահավորման, ինչպես նաև խաղահրապարակի կառուցման միջոցով նպաստել երեխաների և երիտասարդների ֆիզիկական և հոգևոր զարգացմանը, խթանել նրանց և նրանց ծնողների սոցիալական ներառումը:	Ընդունվել է	
9	Սպորտդպրոցի վերանորոգում	Հացիկ բնակավայրում կա գործող սպորտդպրոց, սակայն գտնվում է անմխիթար վիճակում, որտեղ զբաղվում են ըմբշամարտի մարզումներով: Դպրոցը գործում է արդեն 20 տարուց ավել, ունի մարզաձևով զբաղվող 30-ից ավել սաներ,որոնք մասնակցելով տարբեր մրցաշարերի գրավել են մրցանակային տեղեր:Այստեղ են մարզվում նաև հարակից բնակավայրերի սաները:	Ընդունվել է	
10	«Վերանորոգենք դաշտը այսօր, ստեղծենք չեմպիոնական ուղի վաղը»	Նախագծի շրջանակներում նախատեսվում է դաշտի խոտածածկի թարմացում, լուսավորության համակարգի տեղադրում, ցանկապատի վերանորոգում և ենթակառուցվածքների բարելավում: Վերանորոգված ֆուտբոլի դաշտը կկարողանա ծառայել համայնքի և բնակավայրի վարչական կառույցներին:	Ընդունվել է	
11	Խաղաղ հրապարակ	Առաջարկվում է կառուցել խաղահրապարակ Փոքրաշեն բնակավայրում:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:
12	Ազատան բնակավայրի տարածքում ռետինե հատակով ֆուտբոլի դաշտի կառուցում	Նպատակն է երեխաներին համակարգչային խաղերից և վիրտուալ իրականությունից կտրել և տեղափոխել բակ՝ առողջարար խաղերով խաղալու:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:

13	«Մայիսյանի ժառանգության ուղի»	Ծրագրի նպատակն է Ախուրյան համայնքի մշակութային ժառանգության, հին շինությունների, հայտնի մարդկանց և տեսարժան վայրերի ճանաչելիության բարձրացումը՝ ֆիլմի միջոցով: Ֆիլմը կներկայացնի Մայիսյան գյուղի գյուղական կյանքը, համայնքի մշակույթը, պատմական ժառանգությունը և զբոսաշրջային գրավչությունը՝ նպաստելով տարածաշրջանի զարգացմանն ու զբոսաշրջային հետաքրքրության աճին:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:
14	Ֆուտբոլի դաշտի կառուցում, վերականգնում	Առաջարկվում է բարեկարգել Ոսկեհասկ բնակավայրում գտնվող ֆուտբոլի դաշտը, որից օգտվում են ոչ միայն Ոսկեհասկ բնակավայրի այլև հարակից գյուղերի, այդ թվում՝ Ախուրիկի, Առափիի, Ղարիբջանյանի բնակիչները: Դաշտը անմխիթար վիճակում է, խոտածածկը ոչ բարվոք, չկան դարպասներ, ֆուտբոլային դաշտի համար անհրաժեշտ գծանշումներ, դարպասներ:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:
15	Մանկապարտեզի դահլիճի, մարզադահլիճի, սանհանգույցի, հանդերձարանի, միջանցքի կոսմետիկ վերանորոգում, ջեռուցում, գույքով համալրում	Սաները կկարողանան լիարժեք անցկացնել ֆիզիկական դաստիարակության պարապմունքները,մանկապարտեզում անցկացվող երաժշտական պարապմունքներն ու միջոցառումները անցկացվեն հավուր պատշաճի: Համագյուղացի երեխաները վերսկսեն ընդհատված նկարչական խմբակի պարապմունքները,սպորտով զբաղվողները իրենց պարապմունքները անցկացնեն բարելավված պայմաններում:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:

16	«Քեթիի օազիս»	Հանգստյան գոտիների ստեղծումը կարևոր գործընթաց է, որն ուղղված է բնապահպանական, հասարակական ու տնտեսական նպատակների հասնելու համար: Հանգստյան գոտին ստեղծելով նպատակ ունենք ապահովելու մի միջավայր,որտեղ մարդիկ կարող են հանգստանալ և վերականգնել իրենց էներգիան: Մեր հանգստյան գոտին համատեղվելու է շրջակա բնապատկերների հետ, պահպանելով բույսերը:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:
17	«Ապագայի գրադարան»	Քեթի բնակավայրում բազային գրադարանային ֆոնդի անմխիթար վիճակից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով Ախուրյան համայնքի ակտիվների քարտեզագրման հետազոտության արդյունքները առաջարկում եմ ձեռք բերել գրադարանային գույք, գրքեր, ինչպես նաև վերանորոգել գրադարանի նախկին շենքը: Ծրագիրը կնպաստի բնակչության կրթական ցենզի բարձրացմանը, միջբնակավայրային նոր կապերի հաստատմանը,ծրագրի արդյունքում կզարգանա Քեթի բնակավայրի բնակիչների հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:
18	Ազատան բնակավայրի Հայրենական Մեծ Պատերազմին նվիրված հուշարձանի տարածքում	Առաջարկի իրականացման շնորհիվ կբարեկարգվի հուշարձանի տարածքը, կզարգանա մշակութային կյանքը: Ամֆիթատրոնի կառուցումը կծառայի նաև հարևան բնակավայրերին, կակտիվանա ներքին տուրիզմը:	Մերժվել է	Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել:

	ամֆիթատրոնի կառուցում			